

Արծրունուոյ եւ Վասակայ Սիւնուոյ եւ Յուդայի Իսկարիովտացուոյ»:
Ան ատեն ծերը դարձեալ հարցուց. «Ի՞նչ պատժոյ արժանի կը
համարիք այս յանցաւորները»: Դարձեալ տոյն ձեռով
պատասխանեցին միաբան՝ «մահու»: Բերել տուին ատենադպիրը՝
երիտասարդ աբեղայ մը եւ ծերը տուն կ'ուտար եւ նա կը գրեր վճիռը,
երբ վճռուեցաւ ամէն բան եւ ստորագրութիւնք, ու մեծաւ մասամբ
ստորագրութեանց տեղ իսլանիշք դրուեցան, հրաման եղաւ, որ
ամրաստանեալք եւ բոլոր ժողովուրդը ներս մտնէ: Եւ ծեր դատաւորը
կարդաց վճիռը.

«Մենք, ներքոյ ստորագրեալքս, համի Տեառն ութ հարիւր
հիսունկերկու եւ Յայոց թուականին երեք հարիւր մի, եւ Մեհեկի
ամսոյ երեք, ժողովեալ ի Տարօն ի քաղաքն Օձն քննեցինք առաջի
աստուծոյ Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի եւ Վահրամ Գնունի
թիկնապահ, եւ ակներեւ՝ անսխալ ապացոյցներով յայտնի եղաւ մեղ
թէ սոքա երեքը միաբան դրեալ եւ կնքեալ նամակաւ առ Բուղայ
մատնեցին իրենց իշխանը Աշոտ Արծրունի ի կապանս եւ ի
գերութիւն, եւ Վասպուրական երկիրն ի հուր եւ ի սուր. վասն
այնորիկ մենք զիրենք արժանի դատեցինք մահու եւ այս վճիռն ու
նորա գործադրութիւնը յանձնեցինք Յովնանու Խուրեցուոյ, ընտրեալ
զօրավար Սասնոյ գաւառին, որ ո՛ր տեղ եւ ո՛ր կողմ արժան եւ
յարմար դատի՝ այս մեր պատժոյ վճիռն ի գործ դնէ յօրինակ եւ ի
զգուշութիւն չարագործաց եւ միամտաց»:

Երբ ամենքը սկսան ցրուի ի Գուրգէն, որ խոր մտածութեան մեջ էր,
մէկ կողմ առաւ ծեր դատաւորը առանձին եւ ծոցէն փոքրիկ նամակ
մը հանելով, «Յայրիկ,— ըսաւ,— սա նամակին գիրը եւ այդ դաւաճան
մահապարտաց առ Բուղայ ղրկուած գիրը թեպէտ փոխուած իրարու
չե՞ն նմանիր. ինդրեմ, մէկ մը քըննէ, վասնզի դու փորձ մարդ ես»:
Ծերը երկու թղթերը քովե-քով դնելով՝ երկար գննութենէ մը վերջ.
«Որդեակ, հարիւրին իննսունինն հաւանութիւն կայ թէ սա երկու
նամակին գրողն միեւնոյն մարդն լինի, թեպէտ ջանացեր է, որ գիրը
ծամաճռէ»: — Շնորհ ունիմ քեզ, Յայրիկ,— ըսաւ Գուրգէն եւ դուրս